

ՀԱՅՈՒՆ ՀՈԳԵԻՈՐ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

1. Ս. Էջմիածին Եկեղեցին Ծննդաւայրը
Հայ Հոգւոյն
2. "Անոնք Ո՛չ Արիւնէն, Ո՛չ Մարմինի
Կամբէն և Ո՛չ Մարդու Կամբէն, Այլ
Աստուծմէ Ծնան
3. «Քաջալերուէ՛, Ելի՛ր, Քեզ կը կանչէ»
4. Համայնապատկեր, Ամբողջական
Տեսարան
5. Քրիստոնէութիւնը Ի՞նչպէս Ըմբռնել

THE SPIRITUAL NATIVE HOME OF THE
ARMENIANS

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2007

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն ԾՆՆԴԱՒԱՅՐԸ ՀԱՅ ՀՈԳԻՈՅՆ

Իրիկուն է, և դուրսը խաւար սակայն երկնակամարը կը փալվւայ իր դիւթիչ աստղերու ժպիտով: Անամպ երկնափ տարածփին օդանաւը կը սուրայ դէպի Զուարդնոց օդակայան, մարդաստեղծ ռատարի ճառագայթով մը իսկ իմ հոգւոյս աչքը կը դիտէ Ս. Էջմիածին Եկեղեցւոյ գմբեթէն ճառագայթող Խաչը, որ ո՛չ միայն փոխակերպած է Հայաստան աշխարհը, այլ բոլոր Արեւմտեան երկրի Բաղափակրթութիւնը:

Կը խոնարհիմ իմ Փրկչիս Յիսուսի սուրբ Խաչին, որ յարթակաօրէն կանգնած է Հայց. Առաքելական Մայր Եկեղեցւոյ գմբեթին բարձունքը, ու անվեհեր կը վկայէ աշխարհի, թէ աստուածահրաշ գօրութեամբ չէ՛ խոնարհած ո՛չ պարսիկ ու ո՛չ ալ Իսլամ մահիկի պատուանդանին: Խաչի՛ն ճառագայթներն էին, որ հակադրեցին Մագսէականութեան կրակը ու սուրբ նահատակները վառ պահեցին Հայ աշխարհը Յիսուս Քրիստոսի հաւատփին մէջ: Խաչաճառագայթ տեսարանները գեղեցկութիւնն են մեր հայրենի աշխարհին ու յաճախ լուռ ու անբարբառ կը ներգործեն մեր ժողովուրդին կեանքին վրայ:

«Մարդեղութիւնը կը ճառագայթէ՛ մեր կեանքին մէջ, կը մարմնաւորուի մեր գործերով, կը զարդարուի առաքինութեան գոյնով, կը դրոշմուի բարութեան բնութագիծով և կը պտղաբերուի երջանկութեան բարիքներով»
--Գարեգին Ա. Կաթողիկոս:

Մարդ՝ մարդ մտնելու վրայ եղող ճառայթ մըն է միայն, բայց Բաղքագո՛յնն է դառնալ յաւերժ ճառագայթը Քրիստոսի լոյսին և յոյսին: Խոր Վիրապէն ճառագայթող լոյսը Բալեց հայ ժողովուրդի ճամբաներէն, ապրեցաւ հայ ժողովուրդի սրտին զարկով ու դարձաւ Ս. Էջմիածին, Նարեկացի, Ծնորհալի ու Տաթեւացի ու մանաւանդ վերապրեցուց Մեծ Եղեռնէն արժող հաւատացեալները:

Այսօր, 1,700 տարիներ յետոյ Ս. Էջմիածին Միայն պատմական անուն մը չէ՛, Բարաջէն կառոյց մը չէ՛, այլ՝ ճառագայթող Զօրութիւն մը, Հայ ազգը վերացնող Հոգի՛ մը, և երկնափ Բաղափացի պատրաստող կորիզային կեդրոն մը: Հայեր իրենց պատմութիւնը գրեցին իրենց սրբատեղիներով և ուխտատեղիներով՝ Աղթամարով, Անիով և Ս. Էջմիածնով, իսկ ուրիշ ազգեր

գրեցին իրենց պատմութիւնը՝ սուրով, նիզակով խաբեբայ դիւանագիտութեամբ և բունատիրութեամբ:

Ս. Էջմիածնի խորհրդաւոր կամարներուն ներքեւ, Տաճարին կեդրոնը հանգչած է Իջման Ս. Մեղանը: Կը խաչակնքեմ իսկոյն, կրօնական երկիւղածութեամբ: Կը խոնարհիմ Ս. Մեղանին, կը համբուրեմ Ս. Աւետարանը, ու կը խաչակնքեմ կրկին: Ամբողջական սարսուռ մը, ելեկտրական հոսանքի մը պէս կը ցնցէ եութիւնս:

Էջմիածնի տարածքին մարդիկ բնակած են հնագոյն ժամանակներէ ի վեր: Այս մասին գրաւոր ամենահին տեղեկութիւնը կը պատկանի ուրարտական թագաւոր Ռուսա Բ-ին, որ ապրած է Զրիստուէ առաջ մօտ 885--845-թ: Զաղաքին նշանակութիւնը յատկապէս մեծցաւ երբ Զրիստուէ-ութիւնը պետական կրօն հռչակուեցաւ 301 թուականէն յետոյ:

Ազաթանգեղոս կը վկայէ, որ Գրիգոր Լուսաւորիչ տեսիլքի մէջ ականատես կ'ըլլայ, ուր Յիսուս Զրիստոս կ'իջնէ երկինքէն և Իր Ձեռքի ոսկի ուռով ցոյց կու տայ այն վայրը, ուր Ս. Հռիփսիմեանց կոյսերու նահատակութեան պատուին պէտք է կառուցանէ *«տուն աղօթքի»*: Ընդարաջելով աստուածային ցուցմունքին, Գրիգոր Լուսաւորիչ Տրդատ Մեծի, նախարարներու և հաւատացեալ ժողովուրդի օգնութեամբ կը կործանէ Սանդարամետի մեհեանը և նոյն տեղւոյն վրայ, 301--303, կը հիմնէ կաթողիկէ Եկեղեցին՝ Հայաստանի Բրիստունէական անդրանիկ Մայր տաճար Ս. Էջմիածինը, Հայոց Բահանայապետութիւնը և Սուրբ Էջմիածնի միաբանութիւնը: Տրդատ Թագաւորը, Աշխէն Թագուհին և իր Խոսրովիդուխտ Բոյրը միացած որմնադիր արհեստաւորներու հետ կը կառուցանէին Ս. Էջմիածին Եկեղեցին: Ինքը՝ Տրդատ բահով և բրիչով կը փորէ անոր հիմերու խարխիսները:

Տրդատ Թագաւորն ալ պէտք է ճանչնալ իբր Գրիգորի գործակից, այսինքն առաքելակից և լուսաւորչակից մը: Տրդատ Թագաւոր Արշակունի հարստութենէ էր, և Պարթեական ծագում ունէր, ինչպէս էր նաև Գրիգորի հայրը, այնպէս որ ազգակցութեան կապ մըն ալ կը միացնէր երկու գործակիցները, Բրիստունէութեան Բարոզիչ առաքելը և Բրիստունէութեան պաշտպան Թագաւորը: Բայց արեւակցութենէ աւելի *հաւատոյ եռանդն էր՝* որ երկուքը զօրաւոր կապերով իրարու միացուց: Տրդատ Թագաւոր դարձի գալէն յետոյ՝ յունարէն Աւետարանը ձեռքը բռնած, անկէ կը կարդար հրապարակաւ, հայերէնի կը թագմանէր և ժողովուրդին կը Բարոզէր:

Ս. Էջմիածին ունեցած է հոգեւոր մշակութային յատկանշական կեանք, շարունակ հարստացած է նորանոր կառոյցներով ու հիմնարկութիւններով: Ս. Լուսաւորչի օրով, 302--325, կառուցուած են հայրապետանոցը, միաբաններու և սպասաւորներու իջեւանները: Հիմնուած է Ս. Հռիփսիմեանց վկայարանները, հոգ տարուած է նորահաստատ Բրիստունէութեան ուսուցումը և պատրաստուած է հոգեւոր գործիչներու կրթութիւնը և անոնց ուղղութիւնը:

Ա. Գրիգոր լուսաւորիչ աշխատեցաւ դարձնել իւրաքանչիւր Հայ հաւատացեալը ինքն իր մէջ եկեղեցի և նոյն ինքը՝ Բահանա, իւրաքանչիւր մարմին սուրբ սեղան և անոնց հոգիները ընդունելի գոհաբերութիւն: Եկեղեցին միայն աւանդեալ հաստատութիւն մը չէր, հապա՛ հոգի՛ն կենսաւորող ուժ մը: Եկեղեցին Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնն ու հաղորդակցութիւնն է: Տրդատ թագաւորի ջրջանին Հայ թարգմաններ կային, որոնք եկեղեցւոյ ամէն մի վարդապետութիւն և խորհուրդ հասկնալի կ'ընէին ժողովուրդին:

Եկեղեցին ունի երկու նշանակութիւն, մէկը՝ **Բարեղէն**՝ կառոյցն է, ուրկէ ներս կը մտնենք աղօթելու, իսկ միւսը՝ աւելի **հոգեւոր** իմաստ ունի՝ «Եկեղեցին նոյն ինք ժողովուրդն է»: Մեքենազէն, հիւլեաջարժ, նիւթապաշտ ներկայ դարուն մէջ, միակ հաստատութիւնը, որ կը բարձրանայ, միակ հիմնարկութիւնը, որուն կատարը չի՛ սասանիր ջաշող մորիկներէն, Զրիստոսի Ա. Եկեղեցին է: Չ ի բաւեր եկեղեցին ունենալ, պէտք է **եկեղեցին ապրի՛լ**: Եկեղեցին կանչուած է դառնալու ժողովուրդին խիղճը, ընկճուածներու պաշտպանը Աւետարանի յաւիտենական ֆարոգիչը և դժուարութեան ժամանակ միխթարողը:

Եկեղեցիները իրենց ֆարեղէն կառուցուածքով իսկ խօսուն արտայայտութիւններ են այսօր, որովհետեւ Զրիստոսի վկաները, եկեղեցւոյ շաղախին մէջ, խառնեցին իրենց ֆրոսինքը, արիւնը և հաւատքը երբ Ա. Էջմիածին կը կառուցուէր:

«Արքայութեան մուտքի տոմարը կը ստացուի երկրի՛ դեսպանատունէն, որ Զրիստոսի Եկեղեցին է»:

Եկեղեցին կը շարունակէ մնալ ամբուլթեան պարիսպ, հոգեւոր ներշնչումի աղբիւր, և անփոխարինելի դպրոց: Եկեղեցին եղած է աւելի, քան դպրոց մը. եղած է միտքի և հոգիի դարբնոց, եղած է տոհմիկ բոյն, իմացական ու հոգեկան զարգացումի կեդրոն և միաժամանակ՝ ազգային օջախ, եղած է ընտանիք, եղած է կաճառ: Հոն իջիւած են միտքն ու սիրտը, զգացումն ու հաւատքը հաւասարապէս: Ան ծնած է Հայ հողի ընթերէն, ծնած ու խտացուցած է իր մէջ Հայութեան կենդանի բնագոյրը, անոր մարմնաւոր ու հոգեկան առաքինութիւնները, անոր կեանքի իմաստութիւնը, անմար հաւատքն ու ֆաջութեան ոգին:

Հարցո՛ւմ մը միայն, ու ո՛չ դատաստան:

Միթէ այսօր կը բաւէ՛ որ յոխորտանք՝ թէ առաջին Զրիստոնեայ ազգն ենք, և մկրտուած 301-ին: Ի՞նչ ըրինք մեր անդրանիկ մկրտութեամբ: Ո՞ւր է Հայ Եկեղեցին, որքանո՞վ սեր՝ իր կոչումին ու առաքելութեան: Այն օրէն որ եկեղեցին լոկ ազգապահպանութեան և մշակութային հաստատութիւն նկատ-

ուեցաւ, դադրեցաւ գրեթէ մշակոյթ արտադրելէ: Մինչդեռ անցեալին գրեթէ մեր ամբողջ մշակոյթը կրօնական նկարագիր ուներ:

Եկեղեցի մը երբ ծառայէ պետութեան մը աշխարհի՛կ շահերուն, կամ լծուած է կուսակցութեան մը տիրակալութեան, ան հասած է այլասերումի վտանգաւոր վիճակին: Եկեղեցին՝ դառնալու է ազգի մը կրօնական ու պաշտամունքային կեանքին սեւեռակէտը:

Հայ Առաքելական Եկեղեցին իր մէջ միաձուլեց ժողովուրդը:

Հայ հանճարը Հայ Եկեղեցիի կարոյցներու ընդմէջէն կ'արտացոլայ:

Հայ ժողովուրդի հոգեւոր հայրենիքը Հայաստանեայց Եկեղեցին է:

Հայ լեզուն հայոց եկեղեցւոյ մէջ կենդանի մնաց:

Հայ կեանքը հայոց եկեղեցւոյ մէջ զարգացաւ:

Հայ պատմութիւնը հայոց եկեղեցւոյ պատմութիւն դարձաւ:

Հայ եկեղեցին՝ իր շահերը ազգին շահերէն երբեք չի բաժնեց:

Հայ նկարչութեան ոսկեդարը ծաղկեցաւ եկեղեցւոյ մէջ:

20րդ դարու յարափոփոխ վիճակներու և անաստուածութեան ջունչով ծնեալ Հայը, ժառանգական ու տոհմային աւանդականութեամբ՝ Զրիստոնեայ չի կրնար մնալ այսօր: Այս նորածինի մկրտութիւնն ու դրոշմուած հաւատքը պարտաւոր է, որ

**իմաստաւորուի և արժէքաւորուած
հասկացողութիւն դառնայ:**

Յուլիս 20, 1997

Հայաստան Աշխարհ

“ԱՆՈՆՔ Ո՛Չ ԱՐԻՒՆԷՆ,

Ո՛Ջ ՄԱՐՄՆԻ ԿԱՄՔԷՆ և Ո՛Ջ ԱԼ ՄԱՐԴՈՒ ԿԱՄՔԷՆ, ԱՅԼ ԱՍՏՈՒԾՄԷ ԾՆԱՆ՝

--Յովհաննու Ա.13:

Ի՞նչ կը նշանակեն. "Ո՛ջ Արիւնէն, Ո՛ջ Մարմնի կամֆէն" խօսքերը: Ըստ Հրեայ կրօնաւոր Ռաբբիներու և մտաւորական փաղանգի ուսուցման, Հրեայ Ազգը, մշտնջենապէս պիտի պատկանի և սեփականութիւնը պիտի ըլլայ Արարիչ Աստուծոյ, որովհետեւ ան սկիզբ առած է Աբրահամի, Իսահակի և Յակոբի սերունդէն: Անոնք կը պարծենային ու կը յիտորտային թէ իրե՛նք մարմնապէս սերունդն են Աբրահամի, Իսահակի և Յակոբի արիւնէն ու մարմնի մասնիկէն ծնած:

Յիսուսի առաքելութեամբ և Անոր աւետարանչական սիրոյ պատգամները բնաւ ազդեցութիւն մը չունեցան Հրեայ մեծխօսիկ ազգին: Այս ամբարտաւան և ինքնահաւան ազգը, փոխանակ ապաշխարելու և գալու ինքզինքին և զոչալու, դարձաւ դահիճը Աստուծոյ Օծեալին: Յիսուս յաճախ բացատրեց Հրեայ ազգի զաւակներուն, թէ ո՛չ թէ Աբրահամի՛ զաւակներ ըլլալուն համար անոնք ժառանգներն են Աստուծոյ թագաւորութեան, այլ բոլոր անոնք, որոնք պիտի ընդունին Յիսուս Քրիստոսը և պիտի հաւատան թէ Ա՛ն է Աստուծոյ օծեալը որպէս Տէր երկրի ու երկինքի մէջ: Յովհաննէս առաքեալ, Յիսուսի սիրած աշակերտը, շատ հասկնալի կերպով կը գրէ իր Աւետարանին **Ա.11-13** համարները ու անոնցմո՛վ կը պատգամէ.

Յիսուս, «Իրեններուն եկաւ, բայց իրենները չընդունեցին զԱյն: Իսկ անոնք որ ընդունեցին զԱյն՝ իշխանութիւն տուաւ անոնց ըլլալու Աստուծոյ որդիներ, անոնց՝ որոնք՝ կը հաւատան Իր Անունին: Անոնք ո՛չ արիւնէն (Աբրահամէ), ո՛չ մարմնի կամֆէն և ո՛չ ալ մարդու կամֆէն, այլ Աստուծմէ ծնան»:

Տգիտութիւնն ու խաւարամտութիւնը հետեւանք են ազգային լճացումի և պատեանի մէջ քաջուելու: Աստուած, մարդ արարածը չէ ստեղծած նման կրիայի՝ ոսկորէ պատեանի մը մէջ, այլ՝ Մարդկային մարմինը հրաշարուեստ կարոյց մըն է, որ կը շարժի և կը խօսի. կը ճամբորդէ ու կը շրջագայի որովհետեւ անհունին ծարաւն զգացող հոգի մըն է ան: Մեծ դժբախտութիւն է տեսնել թէ՛ ազգեր և թէ՛ անհատներ, որոնք կը լինեն իրենց ընկերային շրջանակը, միջյարանուանական սիրոյ ու գործակցութեան ուրախութիւնը, յառաջացումը դէպի աստուածնամանութեան, ու կը քաջուին իրենց պատեանին մէջ: Ի՞նչ հոգեկան հարստութիւններ ու գանձեր կան իւրաքանչիւր յարանուանութեան մէջ, որոնք կը սպասեն գործադրուելու *համայնակա՛ն* միասնականութեամբ: Նոյնիսկ ա՛յսօր ուշ չէ:

Ինչպէ՞ս կարելի է պատշաճեցնել Հրեայ ազգին մեկուսանալը և հեռանալը մարդկային շրջանակէն: Թէև Հրեայ ուրբիներ բացատրեցին ճշգրիտ տեղն ու գիւղը ուր պիտի ծնանէր Աստուծոյ Օծեալը, սակայն իրենք չունեցան նոյնիսկ բեկոր մը հետաքրքրութիւն միանալու Արեւելի մոզերուն, տեսնելու համար Մարդեղեալ Մանուկ Մեսիան: Ահաւասիկ այսպիսի դժբախտութիւններ կը պատահին բոլոր այն ազգերուն, որոնք կը բաշտին իրենց պատեանին մէջ ու կը լճանան: Վերոյիշեալ պատճառին համար, Աստուծոյ Օծեալը կ'ըսէ ներկայ դարու Բրիստոնեայ հաւատացեալներուն.

**«Շատ առաջիներ վերջին պիտի ըլլան,
իսկ վերջիներ՝ առաջին»--Մատթ. ԺԹ.30:**

Ո՛ր կը գտնուի Հայ Եկեղեցին ներկայ դարուն: Հայ Եկեղեցին շատոնց հասած է հաւատքի խաչմերուկին: Փորձած է համաեկեղեցական բազմաթիւ Էկումենիկ գումարումներ շատ մը տեղերէ հաւաքուած, որոնք վերջացած են միայն **հիւրասիրութեամբ**: Այս եկեղեցական գումարումները, թէև իրար յարգելով գովաբանած են զիրար, սակայն խորք չունենալուն համար, իրենց հաւաքոյթները մնացած են միայն գովասաններ, ճաշկերոյթներ և ցուցադրութիւններ:

Յիսուս Բրիստոս, Տէ՛րն ու Գլուխը Եկեղեցոյ, ստոյգ կերպով պատուիրած է Իր հետեւողներուն և Զինք սիրողներուն, ըսելով.

**«Եթէ դուք զիրար սիրէ՛ք՝ առով ամէնքը պիտի
զիանան թէ դուք Իմ աշակերտներս է՛ք»--Յով. ԺԳ.35:**

Ի՞նչ կը նշանակէ սիրել: Սիրել կը նշանակէ հոգեկան ճառագայթում, լուսաւորում, անձնանուիրում և ծառայասիրութիւն: Բոլոր առաքիւնութիւնները սահմանող, և դասակարգող տիեզերքի մեծագոյն խորհուրդը **սէ՛րն** է: Տիեզերքի ստեղծագործութեան ոյժը Սէ՛րն է: Մովսէսի մոզական գաւազանը՝ **Աստուծոյ վա՛խն էր**, իսկ Յիսուս Բրիստոսի գաւազանը՝ **Աստուծոյ Սէրը**: «Սէրը՝ որ կեանքով ու գործով կ'արտայայտուի, ծառայութեամբ ու բարիքով կը մարմնանայ և, ի հարկին, խաչով կը կենուի» --**Գարեգին Ա Աթորիկոս**: Եթէ սիրենք մեր թշնամին՝ իր հոգին մեզի աւելի յստակ պիտի ըլլայ և որքան աւելի թափանցենք անոր մէջ, այնքան աւելի պիտի տեսնենք թէ իրաւունք ունի մեր գութին և մեր սիրոյն:

Յաճախ հիւանդանոց կ'երթամ աղօթելու Հայ հիւանդներու: Պաշտօնիս բերմամբ իրաւունք ունիմ կարդալու հիւանդանոցի հիւանդներու ընդհանուր ցանկը: Այդ ցանկին մէջ կը կարդամ " Հինտու" բառը, որուն տակ արձանագրուած են բոլոր զանազան հնդիկ կրօնական հաւատացեալները: Իսլամ բառին տակ հաւաքուած կ'ըլլան բոլոր զանազան ազգերու Իսլամ

հաւատքի հետեւող հիւանդները: Երբ կարգը կու գայ Յիսուս Զրիստոսի հաւատացողներու անունները, անոնք տասնեակէ մը աւելի յարանուանութիւններու բաժնուած զանազան եկեղեցիներու անուան ներքեւ կը ներկայանան...:

Զրիստոնեայ հաւատացեալներ, կը սիրեն ցուցադրել նախ իրենց ազգային, կամ յարանուանական անունը և ապա իրենց եկեղեցի մը ըլլալը: Միթէ եկեղեցւոյ գմբեթին վրայի խաչը, բաւարար չէ՞ թէ այդ կարոյցը եկեղեցի՛ մըն է: Սոյն անզգոյշ ապագայի սխալանքին համար, Մեր Տէրը Յիսուս Զրիստոս կը պատուիրէ մեզ ըսելով.

«Եթէ դուք զիրար սիրէ՛ք՝ ասով ամէնքը պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս է՛ք»:

Աստուածաբաններ կը հետաքրքրուին Աստուածաշունչի գրականութեան վերաբերեալ հարցերով և հեղինակներով, ոչ Աստուածաշունչին պատգամովը:

1. Յիսուս Ինքզինք կը կոչէ "Աստուծոյ Խօսք"ը, "Բանն Աստուծոյ", ոչ թէ *գրութիւն մը*, այլ իմաստաւորող և ապրո՛ղ Մեկնաբանութիւնը:
2. Ոչ թէ ո՞վ գրած է Ա. Գիրքը, այլ ո՞վ յայտնաբանած զԱստուած անիմանալին:
3. Յիսուս Զրիստոս ապրեցաւ որպէս կենդանի Աստուածաշունչութիւն և հայելացումը սէ՛ր Աստուծոյ:

Մալքոմ Էֆսի երբ կը հարցուի թէ ի՞նչ է իր ուխտագնացութեան (Մէֆֆա) խորագոյն տպաւորութիւնը, ան կ'ըսէ. *«Նորայրութիւն»*ը. ուր զանազան ազգեր, ցեղեր ու գոյներ ամբողջ աշխարհէն կու գան ու կը միանան որպէս մէկ հոգի...: Երբ միլիոնաւոր Իսլամներ հանդերձուած նոյն ճերմակ պատմութեանով և անճանաչելի թէ ով է հարուստը կամ աղքատը, տգէտը կամ ուսեալը: Այդ երեւոյթը կը խանդավառէ զիս: Ինքզինքս որքա՞ն փոքր և ճղճիմ կ'ըզգամ երբ տեսնեմ Զրիստոնեայ հաւատացեալներ, որոնք իրենք զիրենք կը ներկայացնեն անջատ անջատ ու մեկուսի եկեղեցիներ, երբ իրենց Խաչեցեալ Տէրը պատուիրած է որ զիրար սիրեն»:

«Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, դուն որ կը կոտորէիր մարգարէներն ու կը քարկոծէիր քեզի դրկուածները, քանի՛ քանի՛ անգամ ուզեցի հաւատել քու որդիներդ, ինչպէս հաւր կը հաւատէ իր ձագերը թեւերու ն տակ. բայց դուք չուզեցիք»--ՄԳ. 34:

«Ահա ձեր տունը (եկեղեցիները) ձեզի աւերակ պիտի մնայ (լիւր)»:

Ապրիլ 2, 2002

Թորոնթօ

“ԲԱԶԱԼԵՐՈՒԷ՛, ԵԼԻ՛Ր,

ՔԵԶ ԿԸ ԿԱՆՉԷ՝

--Մարկոս Ժ.49:

--Մատթ. Ի.31-35:

Պիտի չկորսուիմ երբ միմակ ըլլամ անապատի աւազակոյտերու մէջ, երբ առանձին գտնուիմ ծովու փրփրադէզ ալիքներու բախումին դէմ, երբ միայնակ զգամ ինքզինքս Գեթսեմանի պարտէզին մէջ, երբ լիութիւն գերեզմանի ցուրտ քարածայրերու ներքեւ: Եթէ սպաննուիմ՝ պիտի յառնեմ ու եթէ չարը զիս կորսնցնել ջանայ, աստուածային անճառելի Սէրը պիտի գտնէ զիս: Որպէս Ճշմարտութիւն և Արարիչ Աստուծոյ Միածինը՝ Ես չեմ կրնար կորսուիլ, որովհետեւ Բարութեան անբովանդակելի Անհատականութիւնը, տիեզերքի խորհող և սիրող Ոգեկան Միտքն է՝ Աստուած: Անհուն Զգաստութիւնը՝ Իր Բաղքահայեաց տեսութեամբ, զիս պիտի վերականգնէ, որովհետեւ Ես, Իր սուրբ ներկայութեան մէջն եմ յաւերժօրէն ու Ինք ալ Իմ մէջս:

Զնջուած և անէացած կը կարծուիմ ըլլալ անոնցմէ միայն, որոնց հասկացողութիւնը անձնասիրական և նիւթապաշտական է: Անգոյ եմ անոնց համար որոնց գիտակցութիւնը նախապաշարումի մէջ կը թափառի: Անտեսանելի եմ հարուստներուն և դրամատէրներուն, որովհետեւ ոսկիին ու արծաթին փառքը կուրցուցած է անոնց տեսողութիւնը: Այսպիսիներուն համար Ես ոչ թէ կորսուած մըն եմ, այլ՝ անտեսանելի և անըմբռնելի, կը թուիմ: Ես տեսքար ներկայ եմ ու ժամանակակից ամէն տեղ և ամէն ժամ, իսկ ոմանց համար, ինչ որ ալ ընեն, անճանաչելի և անհասանելի կը մնամ:

--ԱստուածՈրդի Յիսուս Քրիստոս:

Զիս տեսնելը, հասկնալը և ճանչնալը շատ սուղ կ'արժէ: Զիս, գիրքերու մէջ չեմ կրնար գտնել: Որովհետեւ, Ես տառին անտեսանելի նշանակութիւնն եմ, ու գիրին ետեւի լուսափայլ Յայտնութիւնը: Տառն ու գիրը պաշտողները՝ անոնք Զիս խաչեցին: Իսկ բոլոր անոնք, որ անուս և հասարակ կը համարուէին, անոնք տեսան Զիս ու գտան և ճանչցան:

Զիս կարենալ տեսնելու և ճանչնալու համար, տեսնող և ըմբռնող կոյր անհատներու երկու պայմաններ տուած եմ,

1. "Նորէն Ծնանիլ" երկինքէն--Յաւիտենական Արեւալոյս Աէր Աստուծմէ:
2. Ամբողջ ունեցածը ծախել, ուրանալ անձը և սիրել զԱստուած բոլոր հոգիով, մտքով և ծառայութեամբ ու հետեւիլ Ինձի:

Մերկանալ իրենց նախապաշարումներէն, թօթափել իրենց հին ու սնապաշտ կուրմ-գաղափարները: Անջատուիլ նիւթի, կեղծիքի և փառամոլութեան ձգտումներէն: Ըլլալ հաղորդակից չօր և Որդւոյ մշտադատ ներշնչումին և յաւերժաւանդ խորհուրդին: Վերակենսաւորուած հաւատով

հետեւիլ Յիսուս Փրկչին, ապրելով ու հաղորդուելով Անոր հետ: Փոխակերպել իրենց կեանքն ու ապրումը և նմանիլ Անոր մարդեղացեալ կեանքին: Շաղախել իրենց անձը ժողովուրդին հետ ու փոխադրել Յիսուսի խոնարհ չոզին իրենց հոգւոյն մէջ, որպէս կենսանորոգ հաղորդութիւն, տտանալու համար այն փորձառութիւնը, որ միակ ճամբան է հասկնալու, ճանչնալու և սիրելու Յիսուսն ու Անոր պատգամած յաւերժաբոյր Աստուած ճշմարիտը:

Մարդ արարած՝ երբ հաւատքի անխախտ և անմար հրով անցնի կեանքի փորձառութիւն կոչուած տառապանքէն, ու խաչի ճանապարհէն, լոկ ա՛յն ատեն, պիտի տեսնէ "երկինքը բացուած": Եւրոպական և սրբազան փորձառութենէ յետոյ միայն, անոր հորիզոնը պիտի լայնայ ու ենթակային ներաշխարհի մթութիւնը պիտի փարատի և աստուածային Լոյսը պիտի պայծառակերպուի: Բացուած երկինքէն կու գայ մեղմանուջ անլուելի Ջայն մը, որ փաղցրալուր կը հնչէ հաւատացեալի մը ականջին, ըսելով.

*«Երանի անոնց որ սրտով մտնուր են,
վասնզի անո՛նք պիտի տեսնեն զԱստուած.»*
--Յիսուս Քրիստոս:

Յունուար 26, 1991
Թորոնթօ

ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆ

Մարդ արարածին համար սկզբնական օրէն սկսեալ, կայ չկայ, ի՞ր անձը կայ: Այդ փոքրիկ էակը, որ նոր դուրս ելած է իր սաղմէն, կը ճանչնայ մի միայն իր "ես"-ը: Անոր մայրը, իրեն սիրելի մայր մը չէ՛, այլ խոջոր կաթնաման մը: Ան չի մտածեր իր մօրը մասին որ յոգնած է զինք՝ աշխարհ բերելու համար: Եթէ հեռացնես այդ փոքրիկը մօրը գիրկէն, կը ճչայ ու կու լայ, ո՛չ որովհետեւ կը սիրէ իր մայրը, այլ չուզեր հեռանալ այդ կաթնամանէն՝ իր կեանքի աղբիւնէն: Մանուկ մը շատ ուշ կը սկսի սիրել իր մայրը: Զափահասութեան գալէ վե՛րջ միայն կը սիրէ, կը յարգէ և կը գուրգուրա՛յ իր մօր և հօր վրայ: Մինչեւ այդ **գիտակցական օրը**, զաւակ մը անձնասէ՛ր է, համայն մարդկութիւնը իր հոգը չէ: Եթէ բոլոր աշխարհ կործանի, ինք կը մնայ հանդիսատես մը և անձնապաշտ մը միայն:

Նախապաշարումը առանց Բնութեան, ընդունուած պատրաստ նախա-կարծիք մըն է: Ստեփաննոս սարկաւազ ըսաւ իր ազգակիցներուն, *«Կամա-կորնե՛ր, ձեր սիրտն ու ականջները գոց են Աստուծոյ կողմէ»* --**Գործք Է.51**: Իր ցեղակիցները որոնք խաչած և սպաննած էին, իրենց դրկուած Փրկիչը: Բարոյական ոչ մէկ փստանիջ չի կրնար համեմատիլ այն ժխտական տարրին հետ, որ կը կոչուի նախապաշարում: Ան կը մթագնէ միտքը և կ'ալլատերէ հոգին:

Աստուած ճանաչումը հաւատի՛ ուժն է, նախապաշարումի և նիւթապաշտ ազահութեան դէմ: Իրական ինքնագիտակցութիւնը՝ ծառայութիւն, անձնա-զոհութիւն և հանդուրժողութիւնն են, միակ դեղն ու դարմանը նախապաշա-րումին: Արթննա՛նք նիւթապաշտ և ատելավառ "ես"-ի ըմբռնումներէն ու տեսնենք սիրոյ ու հաշտութեան և ծառայասիրութեան իրագործումները:

Յիսուս, աստուածառաք Մարդեղեալը, Ան ոչ միայն Բժիշկն է կոյրին, բորոտին և հաշմանդամին, այլ նաեւ դիւահարին: Ան կը բժշկէ նախապաշար-եալը, ցոյց տալով անոր աշխարհը: Ան կ'ըսէ իւրաքանչիւր անձնատերին և նախապաշարեալին.

1. «Նայեցէ՛ք երկնի թռչուններուն, որոնք ո՛չ վարուցան կ'ընեն, ո՛չ կը հնձեն և ո՛չ ալ շտեմարաններու մէջ կը ժողվեն. բայց ձեր երկնաւոր ձայրը կը կերակրէ զանոնք. չէ՞ որ դուք աւելի էք անոնցմէ»--**Մատթ. 2.26**:
2. «Նայեցէ՛ք վայրի շուշանին՝ ինչպէ՛ս կ'ածի. ո՛չ ջանք կ'ընէ և ո՛չ կը հիւսէ: Կ'ըսեմ ձեզի, որ Սողոմոն անգամ իր ամբողջ փառքին մէջ, չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: Իսկ եթէ դաշտի մէջի խոտը, որ այսօր կայ և վաղը հնոց կը նետուի, Աստուած այդպէ՛ս կը հագուեցնէ, որչա՛փ եւս աւելի ձեզ թերահաւատնե՛ր»--**Մատթ. 2.28-30**:

Այսուհետեւ հոգ մի՛ ընէք ու մի՛ ըսէք՝ ի՛նչ պիտի ուտենք կամ ի՛նչ

պիտի խմենք կամ ի՛նչ պիտի հագնինք, որովհետեւ այդ բոլորը հեթանոսն՝րն են որ կը փնտռեն, քանի որ ձեռք երկնաւոր Հայրը գիտէ թէ այդ բոլորը պէտք է ձեռքի:

«Խնդրեցէ՛ք նախ Աստուծոյ թագաւորութիւնը և իր արդարութիւնը, և այդ բոլորը աւելիո՛ւմ պիտի տրուի ձեզի»

--Մատթ. 2.33

Նախապաշարումի դեմ եղած միակ բալասանը **նայի՛չ** է, տեսնե՛լ է, ո՛չ թէ բու "ես"-ը, այլ բու "ես"-եդ անդի՛նը՝ համայնապատկերը աշխարհին ու տիեզերքին: Մարմնի կուրութիւնը, չարի՛ն՝ Աստանայի՛ն իրագործո՛ւմն է, իսկ հոգեկան կուրութիւնը (նախապաշարումը) մարդո՛ւն ի՛ր ձեռքն է: Որովհետեւ, եթէ կարդանք Յիսուսի Աւետարանները, հոն պիտի տեսնենք թէ Յիսուս Ի՛նք կը բժշկէ կաղերը հիւանդները և մարմնապէս կուրացածները, իսկ հոգեկան կոյրերը (նախապաշարեալներ)-ուն՝ նիկողեմոսներուն, Ան կ'ըսէ.

«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսես՝ քեզի, եթէ մէկը վերստին չձնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը տեսնել»:

--Յով. 9.3:

Յիսուս Ի՛նք չբժշկէր հոգեկա՛ն կոյրը, այլ կը պատուիրէ որ ենթական՝ նախապաշարեալը՝ ի՛նք **«վերստին մնու նդ»** մը ընդունի, ի՛նք ընդունի իր սխալը, ի՛նք դադրի նայելէ միայն իր "ես"-ին աչքերով: Դադրի ըլլալէ Մովսէսի աջակերտ ու դառնայ Մարդեղացեալ Աստուծոյ Որդւոյն հետեւորդ:

Յիսուս Զրիստոսի Եկեղեցիներուն բաժան բաժան ըլլալուն միակ պատճառը, յարանուանութիւններուն միայն իրենք իրե՛նց նայիլն է: Յոյց տուէ՛ք ինձի, որ կայ յարանուանութիւն մը, որ կը հոգայ իրմէ տարբեր յարանուանութիւնը և հոգ կը տանի անոր: Յարանուանութիւններ կրնան մասնակի ժողովներ գումարել, իրարու եկեղեցիներու մէջ քարոզել, բայց այդ բոլորը մակերեսայի՛ն ցուցադրութիւններ են, ո՛չ հոգեկան փոփոխութիւններ: Նախապաշարումի միակ բժշկութեան դեղը **սէ՛րն** է, ուրանա՛լ "ես"ը և "վերածնիլ Յիսուսի Հոգիով": Մերը չպարտադրուիր, սերը չստիպուիր: Եթէ պատահի որ ստիպմամբ մէկը սիրէս, այդ արարքը կը կոչուի պղծո՛ւմ և բռնաբարո՛ւմ: Ուստի, նախապաշարեալ անձը, ի՛նք պարտ է թօթափել (ցնցելով վրայէն նետել) իր "ես"-ը, որպէսզի "մահուր սրտով" կարենայ տեսնել զԱստուած և իր ընկերը:

Եթէ մեր մէջ կա՛յ նախապաշարեալ մը որ կ'ուզէ բժշկուիլ, Յիսուս կ'ըսէ անոր. «Նոր պատուիրան կու տամ ձեզի, որ սիրէ՛ք զիրար ինչպէս Ե՛ս ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցէ՛ք զիրար:

Եթէ դուք զիրար սիրէ՛ք՝ առով ամէնքը պիտի գիտնան թէ դուք Իմ աջակերտներս էք»--Յով. ԺԳ.35:

Ինչպէս վաղ անցեալին, նաեւ այսօր կան բազմաթիւ բարեպաշտ և հոգեւոր կոչուած հաւատացեալներ, որոնք չունին Յիսուս Զրիստոսի և Անոր Աւետարանին համայնապատկերը: Այս հաւատացեալ բարեպաշտները, իրենց բոլոր աստուածասիրութեամբ, չունին Յիսուսի Աւետարանին մտածողական և տեսողական հորիզոնը և համայնապատկեր գիտութիւնն ու ըմբոնումը: Այսպիսիներ իրենց "ես"-ի դիտանկիւնն ըմբոնումով այնպէս համոզուած են, թէ Յիսուսի աստուածայայտնիչ պատուերն ու հրահանգը կը կայանայ.

**«Դուն մի՛ գործանար, որ քսի՛ քեզի
Թէ՛ դուք՝ պէտք է վերստին ծնի՛ք»--Յով. 9:7:**

Յիսուս միայն պատուերներ, հրահանգներ և յորդորներ տալու չեկաւ աշխարհ: Ան միայն անօթիները կերակրելու չեկաւ: Ան միայն Արարիչ Աստուածը բացատրելու չեկաւ: Ան միայն աշակերտներ հաւաքելու չեկաւ: Ան միայն խաչուելու չեկաւ: Ան միայն ֆարոգելու չեկաւ: Աստուածորդի Յիսուս վերոյիջեալ սոյն բոլոր գործունէութեամբ, եկաւ յայտնելու Աստուծոյ Թագաւորութիւնը, փնտտելու կորսուած մեղաւորները և փրկագործելու զանոնք: Ո՛չ միայն մէկ տեսակ դեղի դարմանումով նման Aspirin-ի ձեզի պէտք է. *«Վերստին Մնանիլ»* պատուիրանով: Յիսուսի առաքելութեան համայնապատկեր հորիզոնը և մարդոց մօտենալու ձեւերը ջատ բամազան են:

1. Մամարուհիի մը, որ հինգ զանազան ամուսիններ ունեցած էր առանց ամուսնանալու, Յիսուս մօտեցաւ ինչպիսիքով մը. *«Ինծի խմելու ջուր տուր»* ըսելով--Յով. 4:9, 18:
2. Դրամապաշտ և ֆար սիրտ ունեցող Զակէոսին, Յիսուս մօտեցաւ հետեւեալ ինչպիսիքով. *«Զակէո՛ս, ջո՛ւտ ըրէ, վա՛ր իջիր այդտեղէն, որովհետեւ այսօր ես՝ քու տունդ պիտի իջեանիմ»* --Ղուկ. ԺԹ:5: Դատապարտութեան կամ պատիժի խօսք չըրաւ Յիսուս ազան մաքսապետին:
3. Զահանայապետներն ու Փարիսեցիները Յիսուսի բերին շնութեան մէջ բռնուած կին մը և քսին իրեն *«Վարդապետ, յանցանքի մէջ բռնուած այս կինը յայտնապէս շնացած է, իսկ Օրէնքին մէջ Մովսէս պատուիրած է մեզի այսպիսիները ֆարկոծել, արդ, դուն այս մասին ի՞նչ կ'ըսես»:* Յիսուս ըսաւ Փարիսեցիներուն. *«Ձեր մէջէն անմե՛ղը նախ թող ֆար նետէ ատոր վրայ»:* Երբ դատապարտողներ խղճահար ըլլալով հեռացան, Յիսուս դարձաւ կնոջ և ըսաւ. *«Ո՛վ կին, ո՛ւր ես. ո՛չ ոք դատապարտեց քեզ»:* Եւ ան ըսաւ. *«Ո՛չ ոք, Տէ՛ր»* Եւ Յիսուս ըսաւ. *«Ես ալ չեմ դատապարտեր քեզ. զնա՛, այսուհետեւ մի՛ մեղանջեր»*--Յով. Ը3-11:
4. Հարուստ Իշխանաւոր մը հարցուց Յիսուսի և ըսաւ. *«Բարի՛ վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»:* Յիսուս ըսաւ անոր. *«Մի՛ սպաններ-ը, մի՛ շնար-ը, մի՛ գողնար-ը, սուտ մի՛ վկայեր-ը, քու հայրդ ու մայրդ պատուէ՛ն և քու ընկերդ քու անձիդ պէս պիտի սիրես-ը»*-- **Մատթ.**

ԺԹ 19:

5. Փարիսեցիները երբ լսեցին թէ Յիսուս պապանձեցուց Սաղուկեցիները՝ ի մի հաւաքուեցան. և անոնցմէ մէկը, փորձելով Ջալն, հարցուց և ըսաւ.

«Վարդապետ, Օրէնքին մէջ ո՞ր պատուիրանը մեծ է»: Եւ Յիսուս ըսաւ անոր. **«Պիտի սիրես քու Տէր Աստուածդ՝ քու ամբողջ սրտովդ, քու ամբողջ հոգիովդ և քու ամբողջ մտքովդ: Այս է մեծը և առաջին պատուիրանը. և երկրորդը՝ ասոր նման է. պիտի սիրես ընկերդ քու անձիդ պէս: Այս երկու պատուիրաններէն կախուած են ամբողջ Օրէնքը և մարգարէները»**--Մատթ. ԻԲ.34-40:

6. «Եւ Յիսուս այնտեղէն անցնելով՝ տեսաւ Մատթէոս անուսով մարդ մը, որ նստած էր մաքսատան մէջ: Եւ ըսաւ անոր. **«Ետեւէ՛ս եկուք»:** Եւ ան ոտքի ելլելով գնաց Անոր ետեւէն»:

Յիսուս վերոյիջեալ անձերէն ուսէ մէկուն չպատուիրեց ըսելով «Քեզի պէտք է **Վերստին ծնանիլ**»: Որպէս Քրիստոնէաներ, մենք իրաւունք չունինք *սահման* և *չափ* դնել Յիսուսի առաքելութեան: Մեր Տէրը Յիսուս բժշկելէն յետոյ Գերգեսացի դիւահարը որուն ներսիդին Լեզերն մը դեւեր կային, Յիսուս նաւակ մտաւ և պիտի վերադառնար Գալիլէա: Մեր դիւահար աղբարիկը փափաքեցաւ Յիսուսի հետեւիլ, բայց Յիսուս ըսաւ.

«Գնա՛ քու տունդ, ընտանիքիդ մօտ, և պատմէ՛ անոնց, ինչ որ Տէրը ըրաւ քեզի և ողորմեցաւ»:

Եւ ան գնաց ու սկսաւ տարածել Դեկապոլիսի մէջ, ինչ որ Յիսուս ըրած էր իրեն»--Մարկ. Ե.1-20: Ներկայ մարդկութիւնը կ'ուզէ տեսնել Յիսուսը Բարոզիչի մը ու եկեղեցականի մը կեանքին և ծառայութեան մէջ, ո՛չ խօսքին:

Աննկարագրելի երկունքով ու երկունքէն կը ծնին թէ՛ մարմնական և թէ՛ հոգեւոր կեանքը և երջանկութիւնը: Տրամութիւնն ու երջանկութիւնը կարծես իրարու գործակիցներ են: Քրիստոնէայ ծնիլը դիւրին է, Քրիստոսի աջակերտիլը անձնագոհութիւն կը պահանջէ: Հաւատքը պէտք է աճի մարդու մը մէջ, որ դառնայ իրականին ու ճշմարիտին գիտակցութիւնը: *Կեանքը՝ ապրիլը հոգիի բիւրեղացման միջոցն է*, ժամանակաւորէն դէպի յաւերժութիւն անցիր: Հոգեկան, մտային ու գաղափարական վերածնունդը, ուժի, յոյսի և գիտակցութեան արթնութիւնն է: «Անտրակ Որդիի»ն առակին մէջ մենք կը տեսնենք ծնողի մը ինքնութիւնը: Ծնող մը կը պատկերէ *սէր, ներում և ողորմութիւն*: Մարդ էակի մը պահանջը **ծնած** ըլլալը չէ, այլ **սիրուած** ըլլալն է: Մարդ կը ծնի, կը պայքարի չափահաս ըլլալու համար, յետոյ կամ կը կորսուի կամ կրկին կը ծնի հոգեւորապէս: Ծնած մարդ մը իր ապրելակերպով և գործադրումներով կը գանազանուի, ո՛չ խօսքով:

Յիսուսի սուրբ Ծննդեան տօնը, Անոր **Սարդեղացմա՛ն** Տօնն է՝ Աստուածայայտութեան տօնն է և ոչ Յիսուսի **գոյութեանկա՛ն** Ծնունդին:

«յնրդին Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ Հօրէ՛ Միածին, այսինքն Էութենէ Հօր»։ Ան գոյ էր ի յաւիտենից։ Ս. Մարիամ կոյսէ Յիսուսի Ծնունդը, Անոր *Մարդեղացո՛ւմն* էր՝ «**և Բանը Մարմին եղաւ**»ն էր ըստ Յովհաննէս առաքեալի Աետարանին գրաւո՛ր վկայութեան։ Յիսուս կ'ուզէ մարմնանալ մեր մէջ եւս այնպէս ինչպէս մարմնացաւ աշխարհի մէջ։ Ան կը կանչէ մեզմէ իւրաքանչիւրը ըսելով. «**Եկուք ետեւէս**»։ Յիսուսին մեր մէջ մարմնանալուն նպատակը մեզ աստուածացնելո՛ւ համար է։ Յիսուս ծնաւ մարդո՛ց մէջ, ապրեցաւ մարդո՛ց մէջ, Բարոզեց մարդո՛ց մէջ։ Մենք եւս ապրելու և աշխատելու ենք մարդո՛ց մէջ, ո՛չ միայն այսինչ class-ի մէջ, այլ իսաւր՝ աշխարհի մէջ, որպէսզի լուսաւորենք զանոնք։ Ապրելու ենք մարդկութեան մէջ, խոնարհութեամբ, համբերութեամբ և սիրելով իւրաքանչիւրը, նոյնիսկ սիրելով չսիրուելիքը։

Յիսուսի Ծնունդին սակաւթիւ անձեր եկան հիւրասիրել Զինք՝ հովիւներ և հեռաւոր մոզեր։ Ո՞ր էին աստուածաբաններն ու հոգեւորականները։ Ո՞ր էին իրենք զիրենք բարեպաշտ կարծողները։ Հազարաւոր ճրեաներէն միայն Բանի մը հատը եկաւ։

Մեծաշուք հանդէսներով կը տօնախմբենք Ս. Ծնունդը, և մեծադորոք երգերով ու ցոյցերով կը կատարենք անոր Ծննդեան Տօնը։ Այս բոլորը արտաքին ցոյց է միայն, և վայելք։ Մարդիկ նիւթականացուցած են զայն, հեռացած են Անոր *Խորհուրդէն ու ոգիէն*։ Նոյնպէս բազմաթիւ Բարոզիչներ և բարեպաշտ կարծուած հաւատացեալներ յանկերգի վերածած են Յիսուսի «*Գու՛ք պէտք է վերստին ծնի՛ք*» պատուէրը նիկողեմոս Փարիսեցիին։ Ինչո՞ւ չէրմեռանդ բարեպաշտներ կ'ուրանան Յիսուսի պատուէրին խորհուրդը ու պարզապէս կը կրկնեն այդ խորհուրդին բառերը ու չեն բացատրեր անոր իմաստը իրենց ունկնդիրներուն։

Տէր Յիսուս այսօր կ'ըսէ այն բարեպաշտ Բարոզիչներուն որոնք չեն ապրիր իրենց Բարոզածները և չեն բացատրեր Յիսուսի խորհուրդները։ Այսպիսի եկեղեցականներուն, Յիսուս ըսաւ. «*Վա՛յ ձեզի՛ որէնքի վարդապետներուդ, որ կը պահէ՛ք գիտութեան բանայիները, որք չէ՛ք մտնել և մտնողներուն ալ արգելք կ'ըլլա՛ք*» --**Ղուկ. ԺԱ.52**։ Շատ մը Զրիստոնեաներ կը վախնան "գիտութիւն" բառէն, ու կ'ուզեն կոյրօրէն հաւատալ։ Յիսուս ո՛չ թէ իսաւր՝ բերաւ աշխարհ, այլ լո՛յս։ Ան ըսաւ. «Ես եմ աշխարհի ԼՈՅՍԸ, Ինձի հաւատացողը իսաւրի (տգիտութեան) մէջ պիտի չջարունակէ իր կեանքը, այլ գիտակի՛ց կերպով պիտի շարունակէ ապրիլ։ Յիսուս նոյնիսկ ըսաւ Իր աջակերտներուն.

«Այսուհետեւ երկինքը բացուած պիտի տեսնէ՛ք»։

Գաղափարի մը նուիրուած անհատը կամ գործիչը պէտք է ունենայ իր հոգիի պայծառակերպութեան պահերը, անդրադառնալու համար իր հոգւոյն էութեան, ու գիտակցելու համար իր ձգտումներուն ու առաքելութեան։ Տիրոջ

սրբութեան լեռը կարելի չէ ելլել աշխարհիկ զգացումներով, գիտութեան անմահուր ոտներով ու կօշիկներով, այլ հաւատով ու սրբութեամբ: Աստուծոյ հետ խօսելէ վերջ՝ ենթական վերածնած կեանքի պատգամը ընդունելով Անկէ, պէտք է իջնէ, մահուր խտելով ու արաբեալի տեսիլով: Զրիստոսի Պայծառակերպութիւնը նախափորձ կամ նախաուղեգիծ մըն էր Աստուծոյ Թագաւորութեան: Վայրկեանի մը համար, Պայծառակերպութեան լեռան վրայ, Յիսուս ցոյց կու տայ իր աստուածային փառքը ապացուցանելու համար Պետրոսի վկայութիւնը, թէ Ի՛նքն է Աստուծոյ Միածինը, որուն պարտ են մտիկ ընել:

Լծէ՛ քու կեանքդ Յիսուսի Լոյսին որպէսզի պայծառակերպուիս: Այս պիտի ըլլայ հաւատացեալ մարդու կեանքը: Այլակերպութեան տեսիլքը անհրաժեշտ է բոլոր՝ հաւատացեալներուն, քրիստոնէական կեանքի նշանագիրը ցուցնելու համար: Բեթղեհեմի աստղի լոյսէն ներթափանցուած և պայծառացած Բարոզիչներ ունին տեսիլք՝ ու համայնապատկերը իրենց կոչումին ու կարիքը չունին նոյն յանկերգը՝ «Դուն վերստին ծնունդ ունեցած ես» հարցումը կրկնելու: Յիսուսի նկարագրին Բաղքութիւնը, ցուցումն էր իր հոգւոյն պայծառութեան և բարութեան:

Մերն ու վիշտը, հաւատն ու փորձութիւնը պիտի կազմեն նախանիւթը արարչութեան և էստարըրը ծնուցիչ:

Զսաներորդ Դարէն սկսեալ մարդկային տրամաբանութիւնն ու մտածելակերպը փոխուեցաւ անձնականէն, ազգայինէն ու ցեղայինէն դէպի համաշխարայինը: Այսօր Գերմանիոյ մէջ կ'ապրին մօտ չորս միլիոն Թուրքեր, Ֆրանսայի մէջ մօտ երեք միլիոն Ալճերիացիներ, Անգլիոյ մէջ մօտ վեց միլիոն Ասիացիներ ու Ափրիկեցիներ, Միացեալ Նահանգներու մէջ անհամար ազգեր, ցեղեր և զանազան կրօններու հաւատացեալներ, որոնք իրենք զիրենք Ամերիկացի՛ կը յայտարարեն: Մինչդեռ դար մը առաջ բնաւ երբեք այսպէս չէր:

Հետեւաբար որպէս Զրիստոնեայ հաւատացեալներ, եւ ի սեր Յիսուս Զրիստոսի յայտնութեան և սուրբ արաբեալներու Բարոզութեամբ, ճանչնալու ենք Զրիստոսի Հոգին, գթութիւնը, Բաղքութիւնն ու **մօտեցումը** դէպի իւրաբանչիւր անձ և ունեցած խօսակցութիւնը անոնց հետ:

1. Յիսուս և Սամարուհին

Յիսուս ծարաւ ըլլալուն համար չէր, որ ջուր խնդրեց Սամարուհիէն այլ՝ Ան ուզեց խօսիլ և յարաբերութիւն ունենալ անոր հետ, որովհետեւ Սամարուհի՛ն ալ Իր կորսուած ոչխարներէն մին էր: Յիսուս ուզեց այս կորսուած ոչխարն ալ Իր Բարի Հովիւի՛ն արաջնորդել: Փոխանակ դատապարտելու զայն անոր արտաամուսնական սխալ կենցաղին համար, անոր անմահուր ձեռներով բերած ջուրը խմելու հաճեցաւ: Յիսուս, ոչ թէ Սամարուհիին արտաբնակ կենցաղավարութիւնը միայն դիտեց, այլ տեսաւ

անոր սրտին ու հոգւոյն մէջի անձնաւորութիւնը: Յիսուս չըսաւ անոր. *«Զեզի պէտք է վերստին մ'նկն»*: Յիսուս բացատրեց անոր ի՛նչպէս և Որո՛ւ պէտք է աղօթել: Այս կնո՛ջ, Յիսուս յայտնեց թէ ո՞վ է Հա՛յր Աստուած և ո՞վ է Յիսուս Ինք--Յով. Գ.11, 26:

2. Յիսուս և Զակէէոս.-

Միրոյ և սրբութեան Ակնադրբիւր՝ Յիսուս կը հանդիպի դրամաշորթ մաքսաւոր Զակէէոսին: Փոխանակ յանդիմանելու և պախարակելու զայն որպէս դրամապաշտ, կ'ըսէ. *«Զակէէո՛ս, ջո՛ւտ ըրէ. վա՛ր իջիր այդտեղէն, որովհետեւ այսօր ես բու առնդ պիտի իջեաւնիմ»*: Ինչո՞ւ արդեօք Յիսուս կերթայ մեղաւորի մը տունը և ոչ հոգեւորականի մը: Որովհետեւ Յիսուս եկաւ փնտռելու և գտնելու կորսուած մեղաւորը և փրկելու զայն:

Զակէէոս երբ իմացաւ որ Յիսուս իր տունը պիտի իջեաւնի, ակնթարթի մը մէջ զոչուսի եկաւ, և իր հարստութիւնը բաժնեց աղքատներուն:

3. Յիսուս և շնացող կիներ.-

Պայծառակերպեալ Սրբութիւնը երբ հանդիպում ունենայ մեղաւորի մը, ա՛նպայման տեղի կ'ունենայ ինքնաճանաչման հրաշքը: Ո՛չ թէ միայն մարդկօրէն մեղաւոր ճանչցուածի հրաշքը, այլ՝ նաեւ մեղք չկարծուած արարի՛ն հրաշքը: Կեղծաւոր ու փառամոլ հաւատացեալները, որոնք իրենք զիրենք բարեպաշտ կը կարծէին շնացողներուն հով, Յիսուսի սրբութենէն ազդուած թողուցին շնացող կիներ Յիսուսի ոտներուն հով ու հեռացան իրենց ամօթէն:

Յիսուս նայեցաւ այս կնոջ արցունքահոս աչքերուն և ըսաւ. *«Ո՛վ կին, ո՞ւր ես. ո՞չ ոք դատապարտեց բեզ»*: Եւ ան ըսաւ. *«Ո՛չ ոք, Տէ՛ր»*: Եւ Յիսուս ըսաւ.

*«Ես ալ չեմ դատապարտեր բեզ. գնա՛,
այսուհետեւ մի՛ մեղանջեր»*--Յով. Ը.1-11:

Ժամանակը եկած է որ հաւատացեալներ ճանչնան Յիսուսի բոլո՛ր խօսքերը և մարդոց մօտենալու Անոր Բարոյը կերպերը, որպէսզի առանց մեղաւոր մը գայթակղեցնելու բերեն զայն Բարի Հովիւ Յիսուսի: Ա՛յս է ներկայ 20-րդ Դարու Զրիստոնեայ ըլլալը:

Մայիս 21, 2003

Թորոնթօ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԷՍ ԸՄԲՈՆԵԼ

Քրիստոնեութիւնը հասկնալու և Յիսուսի զօրոյթը ճանչնալու համար, ներկայ հաւատացեալներ, գիտակցելու են հաւատքի հնագոյն ենթախմաստները ու նաեւ հեռանկարը: Օրինակ, Սովսիսական Օրէնքը, Յունական դիձաբանութիւնը, Հռոմէական և "բարբարոս" կոչուած հիւսիսաբնակ հեթանոսներու կրօնքը:

Հայոց աշխարհի իշխանները և անոր Լոյս Հաւատքին ուխտաւորները՝ իրենց իսկ կեանքի արիւնով և դիւցազնութեամբ պաշտ- պան կ'անգնեցան Յիսուս Քրիստոսի ճամբուն և Ճշմարտութեան: Միթէ անոնք սխալա՞ծ կը թուին այսօր: Իրենց բոլորանուէր զոհո- դութիւնը, արդեօք նախապաշարո՞ւմ կամ պատրա՞նք սեպուելու է:

Ո՛չ երբեք:

Պիտի գնահատենք և արժեւորենք մեր նախնիքները երբ անոնց հեռանկարի՛ն ընդմէջէն նայինք Յիսուսաշնորհ հաւատքին՝ մեր անխորտակելի հոգեւոր հայրենիքին և անխոցելի վահանին:

Նախ ճշդենք *"ըմբռնել"* բառին իմաստը: *Իմաստի՛ն թափան- ցել, հատու ըլլալ, գիտակցիլ, հասկնալ և իմանալ* կը նշանակէ:

Քրիստոնեութիւնը մբռնելու համար, արդեօք պա՞րտ ենք դասաւորել զայն կրօններու հանգամանքին մէջ, թէ անկէ դուրս: "Կրօն" բառը կը նշանակէ *կարգ, կանոն, վարք, օրէնք, սովորութիւն և վարդապետութիւն և հաւատալիք*: Քրիստոնեութիւնը ունենալով հանդերձ վերոյիշեալ յատկանիշները, Ան առաւելապէս ունի նաեւ **"Չնորհ"ի "Ճշմարտութեան" և Աստուածայայտ նութեան** հան- գամանքները, որ Զինք գերազանցօրէն բարձր կը դասեն Բան այլ կրօնքները:

"Օրէնքը Սովսէսի ձեռնով տրուեցաւ, իսկ ջնորհի՛ն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի ձեռնով եղան"

կրսէ Յովհաննէս առաքեալ--Ա.17:

Յիսուս Քրիստոսի յայտնաբերած "ջնորհի" ն ու " ճշմարտութիւն"ը ոչ միայն Հրեական կրօնը կը գերազանցէ, այլ բոլոր ազգաց կրօններն ալ: Գերման ժողովուրդներու մեծագոյն աստուածը Թայր (Tyr) պատերազմի՛ սիրահար էր: Հռոմէացիներու աստուածը՝ Արամազդ (Jupiter) աւելի պակաս սպաւորիչ էէ, որ կը ճանչցուէր որպէս երկնային-հոգի և իր զէնքերն էին ջանթերն ու կայծակները:

Յոյներ ջանացին մաքրագործել իրենց աստուածները: Սուկրատ, Պղատոն և Արիստոտել իմաստասէրներ փորձեցին սրբա- գործել Յոյն կրօնական հաւատալիքները և աստուածները ու զանոնք ներկայացնել

ջանացին որպէս կատարեալ էակներ: Ստոյիկեան իմաստասէրներ, իրենց աստուածները նկատեցին որպէս մարմնաւորումը աստուածային "բանին": Էփիֆուրեանները բոլորովին մերժեցին աստուածները, ըսելով որ աստուածներու պէտք չունին իրենց հասկացողութեան մէջ:

Այս էր Միջին Արեւելի և Հռոմէական Կայսրութեան ներքեւ ապրող ժողովուրդներու մտայնութիւնը և հեռանկարը երբ երկնային Միածինը Ինֆզինֆ նոյնացուց մարդու Որդւոյն: Մարդկային տենչանքն ու աղերսը առ աստուածներ՝ անպատասխանի մնացած էին, իսկ Մովսիսական Օրէնքներն ու մարգարէական առաքինութիւնները՝ ձեւապաշտական և ցուցամոլական արարքներ դարձած էին: Հեթանոս Հայաստանն եւս, վատասերած ու ապականած բարբերու պատկերացում մը միայն կը ներկայացներ:

Հոգեկան ու իմացական այսպիսի մթնոլորտի մը մէջ ծլաւ ու արմատացաւ Քրիստոնէութիւնը: Իր սիրոյ և առինքնող զոհողութեամբ ան պանծացուց Ծնորհի և Ճշմարտութեան դրօշը կեսարներու պալատին վրայ:

Իր սկզբնական հերթին, Քրիստոնէութիւնը, **Միրո՛յ** շարժում մըն էր ու ո՛չ խաչակրութիւն: Ուրիշ կրօններու նման բռնութեամբ կամ սպառնալիքով չի տարածուեցաւ ան Հռոմէական կրօնակին ներքեւ ապրող ժողովուրդներուն մէջ: Քրիստոնէութեան, կամ Յիսուսի ճամբուն (ինչպէս սովոր էին կոչել): Քրիստոնէութեան գօրոյթը՝ **սիրո՛յ ու ժգնութիւնն** էր: Կարեկցութիւն կար հաւատացեալներու միաբանութեան մէջ: Աիւն ու կրակ կար անոնց հոգիներուն մէջ: Անոնք վհատած, դեգերած և ջուարած անձեր չէին: Ճամբանին կորնցուցած կեանքի անփարտէս ուղեւորներ չէին անոնք, այլ հալածանքի ու տառապանքի ներքեւ անվեհեր, և աննա- հանջ հաւատաւորներ էին: Նմոյշ մը Պօղոս առաքեալի խօսքերէն.

*«Անա թէ ինչո՞ւ ես կը կրեմ այս չարչարանքները, բայց ամօթ չեմ համարել, որովհետեւ **գիտե՛մ թէ Որո՛ւ եմ հաւատացեր.** և վստահ եմ թէ Ան կարո՛ղ է իմ աւանդս պահել մինչեւ այն օրը»* - Տիմ. Ա.12:

Գիտակից, խելահաս և անձնագոհ հոգիով ու վսեմ նպատակի համար, Ս. Գրիգոր Լուսաւորիչ ընծայեց իր կեանքը Տրդատ Թագաւորի վրէժխնդիր ատեանին: Հայ պետութեան լուսաւորիչը ջաղախեց իր կեանքը, իր Տիրոջ խաչելութեան հետ, որ բարնա՛յ Արարատեան աշխարհի հեթանոս հոգին և ցոյց տայ Յիսուս Քրիստոսի պանծալի սէրը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ, բանտարկուած էր Խոր Վիրապի գնդանը, սակայն իր հոգին կը սաւառներ արծաթափայլ Մասիսի գագաթը ոչ թէ ընդունելու համար անողորմ Օրէնքը Մինա Լեռան, այլ լսելու Պայծառակերպութեան Լեռան յուսադրիչ հրաւերը, որ կ'ըսէր.

«Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ.

Անոր մտիկ ըրէ՞ս--Մասթ. ԺԷ.5:

Գրիգոր Պահլաւունիի մարմնական տառապանքները, հետեւանք էին վիշապադեւերու հետ իր մարտնչումներուն:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ, զէնքի ուժով և վայրագ խաչակրութեամբ չէ՛ որ Տրդատեան Արարատի քաղաքակրթութիւնը շահեցաւ Բրիստոսի, այլ Յիսուսի շնորհքով, Անոր գթութեան ու ողորմութեան վայելչութեամբ յաղթահարեց ասելութիւնն ու հեթանոս վրէժխնդրութիւնը ու պանծացուց **անյիշաչ արութիւնը:**

Ան լուսաւորեց ճշմարտութեան և յաւիտենական կեանքի կանթերը, միացնելով ինքզինք Յիսուս Բրիստոսի անսպառ Իւղին որպէս պատրոյգ այրուելով ու դառնալով զոհակիցն ու խաչակիցը իր Տիրոջ Յիսուս Բրիստոսի:

Հեթանոս ջատագովներ, գազանային ու ճիւղային արիւնահեղութեամբ տարածեցին կռապաշտութիւնը և փորձեցին լուրջեան դատապարտել Յիսուսի՝ եկեղեցին: Բրիստոնեայ եկեղեցի՛ն ալ թափեց արիւն, բայց ո՛չ ուրիշին արիւնը, այլ **Ի՛ր** արիւնը: Ան ոտոքեց կրկեսներու սալայատակը և հանդիսատեսներու մտքերն ու խորհուրդները իր նահատակութեամբ: Զինք չարչարողներու գիտակցութեան ներքին առանձնարանին մէջ ան դրոշմեց Յիսուսի սիրո՛յ և ողորմութեան սերմերը: Յիսուսաբոյր սերմերը աւելի զօրե՛ղ հանդիսացան քան Հռոմէական նիզակն ու սուրը երբ վերջապէս Հռոմէական դրօշն ու արծիւը խոնարհեցան Խաչեցեալ Յիսուսի առջեւ յար և նման Հռոմէացի խաչգամող հարիւրապետին:

Երկնապարգեւ Ծնորհի, ողորմութեան և ճշմարտութեան միջոցաւ, Արարատեան դաշտի Արմէնները ըմբռնեցին Բրիստոնեութեան **ոգի՛ն**: Սիրոյ ու կարեկցութեան սոյն սերմե՛րն էին որոնք ջրուելով ծիլ սուրին Ս. Մեսրոպ Մաշտոցներու, Ս. Մահակ Կաթողիկոսներու, Ս. Գրիգոր Նարեկացիներու, Ս. Ներսէս Ծնորհալիներու և այն անթիւ սուրբերուն, որոնք իրենց կեանքի ճանապարհին չ՛ուրացան Գողգոթան: Անոնք վեհանձնօրէն և արիաբար դրին իրենց ուսը այն Խաչին որ Յիսուս կրեց: Որովհետեւ իրենց հոգւոյն գաղտնաթափանց աչքերը տեսած էին

«Ճշմարտութիւնը, Ճամբան և Յաւիտենական Կեանքը»:

Հայ պետականութեան և ազգին դէպի Բրիստոնեայ դարձը, պատահական երեւում մը, կամ դիպուած մը չէր, այլ ծրագրուած և նպատակաւորողուած առաքելութիւն մը երկինքէն: Ներկայ Հայ սերունդը՝ հայրենի հողի կամ սփիւռքի տարածքին, տէ՛րն է այս ժառանգութեան--Յիսուսաբոյր Բրիստոնեական հաւատքին:

Հայ Նոր սերունդը ի՞նչ պիտի ընէ իրեն աւանդ թողուած երփնագեղ ու զոհարավառ հաւատքը: Արդեօք գրաւափոխի՞ (pawn broker)ի մը պիտի

յանձնէ իր դարաւոր հաւատքը, փոխանակելու համար ժամանակաւոր գրգիռն ու հեշտանքը: Նիւթին հեղինա- կութիւնը երբեք լռեցնելու չէ՛
Քրիստոնէական հաւատքի գերա- զանցութիւնը: Դարեր շարունակ, չայաստանեայց եկեղեցւոյ կարգախօսը եղած է Յիսուս Քրիստոսի հաւատքը: չայ ժողովուրդը իր արեա՛ն գնով, ազգային մշակոյթի և ժառանգութեան վերածած է Քրիստոսի ճշմարտութիւնները:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս, ազնուական զգացումներ արթն- ցնելով զգաստութեան կը հրաւիրէ Իրեն հետեւող հաւատաւորները:

Ուրնելու համար Քրիստոնէութիւնը և ճանչնալու համար Յարուցեալ Քրիստոսը, Յիրդ դարու չայ ժողովուրդը պարտաւոր է աղօթքի հոգիով մտնել հոգիի գաղտնարաններուն ընդերքը, տեսնելու համար Յիսուս Փրկիչը դէմ առ դէմ, որպէսզի կարողանայ ճանչնալ ինքզինքը, սանձահարել իր հեշտ մղումները և արժանանալ չայ եկեղեցւոյ հաւատարիմներու շարքին-

Աստուծո՛յ որդեգրութեան:

Մարտ 11, 1988

Թորոնթօ